Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Քեթիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Ռուսաց լեզու

Թեմա՝ Անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը

Վերապատրաստող, մենթոր՝ Գրքիկյան Լաուրա

Ուսուցիչ՝ Պետոյան Սաթենիկ

Գյումրի 2022

Բովանդակություն

1. Ներածություն…… 3

2. Գլուխ I Անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը

1.1 Անհատական ուսուցման պլան…….5

1.2 Առպի լրացման կարգը……9

3. Եզրակացություն……..13

4. Գրականության ցանկ……..14

Ներածություն

Ներառական կրթություն (ֆր.՝ Inclusif – ներփակված, լատ.՝ include - ներառված), կրթական համակարգ, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը։ Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար։ Ներկայումս Հայաստանում ներառական կրթությունը թևակոխում է զարգացման նոր շրջան, քանի որ նախկինում առկա մարտահրավերները կապված հատուկ կարիքով երեխայի հասարակության կողմից ընդունման հետ կարելի է համարել հաղթահարված։ Հատկանշական է, որ ներկայումս կարելի է փաստել՝ աջակցող թիմի մասնագիտական վերապատրաստումները ունեցել են իրենց դրական արդյունքը, և հիմա նաև մասնագիտական աջակցող թիմերն են ավելի պատրաստված և մասնագիտորեն ավելի կոմպետենտ օգնելու հատուկ կարիքով երեխային կրթության կազմակերպման և սոցիալական ադապտացիայի հարցում։

Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացնելով ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություն՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին։ Արժևորելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման, դաստիարակության, բնականոն զարգացման և սոցիալական ինտեգրման խնդիրները՝ հատուկ ուսումնական հաստատությունների բարեփոխումները հիմնված են երկու հիմնարար սկզբունքների վրա՝ կրթության մատչելիություն և որակ։ Հետևաբար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ իրենց անհատական կրթական կարիքին համապատասխան, ներառական որակյալ կրթությամբ ապահովելը դարձել է օրակարգային հարց։ Այս ուղղությունների իրականացման նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր, փոփոխություններ են առաջարկվել «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում, 2005 թ. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի ընդունումով սահմանվեց «ներառական կրթություն»

հասկացությունը։ Համաձայն նշված օրենքի՝ «Ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ»։ 2007 թվականից սկսած ընդլայնվում է պետականորեն ճանաչված ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների ցանցը։ Այսօր Հայաստանի Հանրապետությունում 117 հանրակրթական դպրոցներ իրականացնում են ներառական կրթություն, այնտեղ սովորում են շուրջ 2700 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ։

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը։ Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է։ Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը։ Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն։

Ներառական կրթության կայացումը առողջ հասարակության ձևավորման կարևոր մասերից է, քանի որ այն ենթադրում է հասարակության յուրաքանչյուր օղակի լիարժեք ընդունում և ներուժի օգտագործում։ Հայաստանում կրթության ոլորտի զարգացման գործում նոր և կարևորագույն շրջան սկսվեց ներառական կրթության ներդրումից հետո, քանի որ կրթության կազմակերպման հիմնաքարը մարդասիրական ավելի խորը ու հիմնավոր գաղափարների ներդրումն է։

Գլուխ I :Անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը

1.1 Անհատական ուսուցման պլան

ԱՈՒՊ-ը հաստատված ձեւաչափին համապատասխան գրավոր մշակվող թիմային պլանավորում է, որը կառուցվում է սովորողի կարիքների, ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների եւ հանրակրթության պետական չափորոշիչների եւ ծրագրերի հիման վրա, որը ներկայացված է հավելված 1-ում :ԱՈՒՊ-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի կրթության հիմքն է:Ուսուցիչներից շատերը ծանրաբեռնվածության և անհանգստության զգացողություն են ունենում ԱՈՒՊ-ի մշակման եւ իրականացման գործընթացների ժամանակ: Այնուամենայնիվ, ուսուցիչները ԱՈՒՊ-ի մշակման թիմի հիմնական մասն են կազմում:ՈՒսուցիչը ոչ միայն օգնում էդասարանում սովորողի առաջընթացի գրանցմանը եւ նպաստում ուսուցման գործընթացում նրա մասնակցության բարելավմանը, այլեւ արժեքավոր ներդրում է ունենում այն պլանի մշակման ժամանակ, որը կօգնի իրեն եւ սովորողին հաջողության հասնել հանրակրթության ծրագրերում:

<u>ԱՈՒՊ-ը փաստաթուղթ է</u>, որը ուսուցիչների, դաստիարակների , երեխաների հետ աշխատող մասնագետների և ծնողների համար ուղեցույց է հանդիսանում:

Այն օգնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցումը կազմակերպել արդյունավետ:

Սովորողի ԱՈՒՊ-ը կազմվում է դիտարկման և գնահատման արդյունքների հիման վրա:

Յուրաքանչյուր սովորողի համար պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կազմվում է ԱՈՒՊ:

ԱՈՒՊ-ը կազմվում է ներառական կրթությանն աջակցող մասնագետների կողմից՝ ուսուցիչների և ծնողի մասնակցությամբ:

Սովորողը ԱՈՒՊ-ի առանցքն է և ողջ գործընթացի բոլոր փուլերի կենտրոնը, հետևաբար նրա հնարավոր մասնակցությունը ԱՈՒՊ-ի մշակման գործընթացներին արդյունավետ և իրատեսական փաստաթուղթ ունենալու կարևոր երաշխիքներից կարող է լինել:

Ծնողը ԱՈՒՊ-ի համագործակցային թիմի անդամ է: Ծնողի ներգրավվածությունը սկսվում է իր երեխայի համար իրատեսական և նպատակահարմար անհատական

ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման փուլից և շարունակվում է ԱՈԻՊ-ի մշակման և իրականացման փուլերում:

Ծնողի մասնակցությամբ մշակվող ԱՈԻՊ-ն առավել իրատեսական է, քանի որ այն սահմանելիս հաշվի են առնվում աշակերտի մասին ծնողի տրամադրած շատ կարևոր տեղեկություններ երեխայի առողջության, տանը և համայնքում նրա դրսևորած նախասիրությունների, հետաքրքրությունների և հմտությունների վերաբերյալ, ինչպես նաև ներառում են ծնողի կողմից սովորողի ուսուցման գործընթացի կամավոր հանձնառությունները:

ԱՈԻՊ-ի իրականացման ընթացքում ծնողը ոչ միայն երեխայի շահերի լավագույն պաշտպանն է, այլև կարևոր դերակատարում ունի դպրոցում սովորած գիտելիքների և հմտությունների գործնական կիրառման, ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում՝ շարունակելով այդ աշխատանքները նաև տանը:

ՈԻսուցչի օգնական

1. Ուսուցչի օգնականն ԱՈԻՊ-ի մշակման և գործարկման ողջ ընթացքում կապող օղակ է հանդիսանում տվյալ աշակերտի առարկայական ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների, ծնողների և աշակերտի միջև՝ նրանց հետ փոխանակելով ցանկացած տեղեկատվություն աշակերտի ուսումնական առաջընթացի և առկա դժվարությունների վերաբերյալ:
2. Ուսուցչի օգնականը ԱՈԻՊ-ի տարեկան նպատակներին և խնդիրներին ուղղված գործողությունների իրականացման ընթացքում ուսուցչի անմիջական աջակիցն է:
3. Ուսուցչի օգնականը ուսուցիչների կողմից սովորողի ԱՈԻՊ-ի պատշաճ լրացման աշխատանքների համակարգողն է:

ԱՈԻՊ-ի մշակման և իրականացման գործընթացում ուսուցչի օգնականի պարտականությունները հանգում են հետևյալին.

- Ուսուցիչների համաձայնությամբ՝ ԱՈԻՊ-ի համապատասխան բաժնում պլանավորում է իր կողմից աշակերտին տրամադրվող աջակցությունները:
- Մշտադիտարկում և ԱՈԻՊ-ի համապատասխան բաժիններում արձանագրում է ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումների՝ խնդիրների ձեռքբերման ուղղությամբ աշակերտի արձանագրած հաջողություններն ու առաջընթացը, ինչպես նաև դեռևս առկա թերացումները:

- Մշտապես մասնակցում է ԱՈԻՊ-ի վերաբերյալ խմբային ժողովներին, ինչպես նաև մշտադիտարկման, ընթացիկ գնահատման և կիսամյակային ու տարեկան ամփոփիչ գնահատման գործընթացներին:

:

ՈՒՍՈՒՑԻՉ

Սովորողի ԱՈԻՊ-ով պլանավորված տվյալ առարկայական ծրագրի հարմարեցման, իրականացման և արդյունքների գնահատման համար առաջնային պատասխանատվությունը կրում է ուսուցիչը (դասվար, առարկայական ուսուցիչներ): Այդ պատասխանատվությունը սկսվում է ԱՈԻՊ-ի մշակման փուլից և շարունակվում ԱՈԻՊ-ի իրականացման և գնահատման փուլերում: Ուսուցիչը նաև տվյալ աշակերտի ԱՈԻՊ-ը սահմանելու որոշման կայացման գլխավոր դերակատարն է: Մասնավորապես նա.

- Աշակերտի հետ աշխատող մասնագետներին և ծնողներին տեղեկատվություն է տրամադրում աշակերտի առաջադիմության մասին:
- Դիտարկումների միջոցով բացահայտում և մատնանշում է աշակերտի ուժեղ և թույլ կողմերը:
- Մշակում է տվյալ առարկայից աշակերտի համար սահմանվող տարեկան նպատակներն ու ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումները:
- Պլանավորում և իրականացնում է աշակերտի ԱՈԻՊ-ով հարմարեցված առարկայական ծրագիրը:
- Մշակում է աշակերտի առաջադիմության գնահատման մեթոդներն ու եղանակները:
- Գնահատում է կիսամյակային և տարեկան արդյունքները:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ

Սովորողների անհատական ուսուցման պլանների մշակման և իրագործման մասով դպրոցի տնօրենի գործունեությունը կապվում է գործընթացի համակարգման և անհրաժեշտ միջավայրի ապահովման հետ: Մասնավորապես տնօրենն ապահովում է.

1. Ծնողի մասնակցությունը ԱՈԻՊ-ի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու գործընթացին:

2. Ծնողի ստորագրությամբ հաստատված համաձայնությունը՝ մշակված ԱՈԻՊ-ն իրականացնելու համար:
3. Աշակերտին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծավալները, տևողությունը և ժամանակահատվածը:
4. ԱՈԻՊ-ի իրականացման համար անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության, հարմարեցված նյութերի և պարագաների տրամադրումը:
5. Ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների մասնակցությունը տարբեր դասընթացների և վերապատրաստումների՝ դպրոցում ներառական կրթական գործընթացը բարելավելու նպատակով:

1.2 Աուպի լրացման կարգը

1.ՍՈՎՈՐՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Անհատական ուսուցման պլանի առաջին կետը ներառում է ընդհանուր կոնտակտային տեղեկատվություն երեխայի մասին: Նկարում ներկայացված է, թե այն ինչ տեսք պետք է ունենա լրացնելուց հետո: Այս կետը պարտադիր լրացվում է ամբողջությամբ, իսկ դրանում անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրվում է դպրոցի տնօրենության և աշակերտի ծնողների (նաև աշակերտի) կողմից:

ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՈՒՊ-ի երկրորդ բաժինը ներառում է 8 ենթակետեր, որոնք ընդհանուր տեղեկատվություն են տալիս աշակերտի մասին.

- Սովորողի ուժեղ կողմերը
- Սովորողի թույլ կողմերը
- Ֆունկցիաների կատարողականության մակարդակը
- Առողջական վիճակի մասին տեղեկատվություն
- Հաշմանդամության մասին տեղեկատվություն
- Սովորողի նախասիրություններ
- Սովորողի մասին իր պատկերացումները
- Սովորողների մասին ծնողի պատկերացումները

2.1 բաժինը լրացվում է թիմի հանդիպման և քննարկման ընթացքում հավաքագրված տեղեկատվության հիման վրա: Այն պետք է արտացոլի աշակերտի ուժեղ կողմերը նրա ակադեմիական հմտությունների, կյանքի և առօրյա կենցաղավարության հմտությունների, ֆիզիկական հմտությունների, վարքագծի կամ այլ ոլորտների վերաբերյալ: Տեղեկատվությունը գրանցվում է երեք տեսանկյունից՝ ըստ մանկավարժահոգեբանական աջակցության խմբի, աշակերտի ծնողի և աշակերտի:

2.2 բաժնում լրացվում է նույն ոլորտների վերաբերյալ աշակերտի թույլ կողմերը, դժվարություններն արտացոլող տեղեկատվությունը, նույնպես երեք տեսանկյուններից՝ ըստ մանկավարժահոգեբանական աջակցության թիմի, ծնողի և աշակերտի:

2.3 բաժնում լրացվում է երեխայի գնահատման արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը: Այսինքն նշվում է, թե ֆունկցիաների 5 ոլորտներում ինչ մակարդակ

է արձանագրված: Նշված ֆունկցիայի դիմաց դրվում է / և գրառվում գնահատման տեղեկատվությունը: Օրինակ՝

ձայնի և խոսքի / ձայնի և խոսքի ֆունկցիայի միջին խանգարում

2.4 բաժնում երեխայի առողջական վիճակի մասին տեղեկատվությունը կարող է ստացվել աշակերտից, ծնողից, երեխայի հետ աշխատող առողջապահական ոլորտի մասնագետից:

2.5 բաժնում լրացվում է բժշկասոցիալական փորձաքննության (ԲՍՓ) արդյունքում ճանաչված հաշմանդամության առկայությունը կամ բացակայությունը:

2.6 բաժնում, աշակերտի նախասիրությունների մասին տեղեկատվությունը ստացվում է սովորողից, ծնողներից, երեխային լավ ճանաչող այլ անձնանցից: Այս բաժինը հետագայում հիմք է ծառայելու երեխայի ուսուցման առավել արդյունավետ ռազմավարություններ ընտրելու և մշակելու համար:

2.7 բաժնում լրացվում են սովորողի մասին իր պատկերացումները: Այս բաժինը լրացվում է հնարավորության դեպքում, երեխայի տարիքային և ֆունկցիոնալ հնարավորություններից կախված:

2.8 բաժնում լրացվում են երեխայի մասին ծնողի պատկերացումները:

ԵՐԵԽԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՈՒՊ-ի 3-րդ բաժնում լրացվում է աշակերտի վերջին գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը, հետևյալ հաջորդականությամբ՝

- առաջնային գնահատում (դպրոցական մակարդակ)
- երկրորդային գնահատում (տարածքային մակարդակ)
- կիսամյակային և տարեկան գնահատում

Այսպես, նախ լրացվում է, թե որ ժամանակահատվածում է իրականացվել դպրոցական մակարդակի գնահատումը և ինչպիսին են եղել այդ գնահատման ընդհանրական արդյունքները: Հիմնականում գրանցվում են գնահատման 20 ոլորտներում արձանագրված առավել նշանակալի տվյալները:

Այնուհետև լրացվում է երկրորդային մակարդակի գնահատման ժամանակահատվածը և հիմնական արդյունքը հակիրճ, այսինքն թե որ ֆունկցիաներում խանգարման ինչ մակարդակ է գնահատվել:

Ի վերջո, լրացվում են երեխայի կիսամյակային և տարեկան գնահատման ժամկետների և արդյունքները, ընդ որում այս գործընթացը շարունակական է, իրականացվում է ամբողջ տարվա ընթացքում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ԱՈՒՊ-ի այս բաժինը բաղկացած է երկու ենթակետերից, որոնցից առաջինում արձանագրվում են անհրաժեշտ հարմարեցումները, իսկ երկրորդում՝ աջակցող ծառայությունների տրամադրման բնույթը:

Առաջին ենթակետում անհրաժեշտ է գրանցումներ կատարել 3 տեսակի հարմարեցումների վերաբերյալ.

- ուսումնական գործընթացի
- միջավայրի

ՍՈՎՈՐՈՂԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Այս բաժինը լրացնելիս առաջին հերթին հարկավոր է հաշվի առնել, որ երկարաժամկետ նպատակը պետք է արտացոլի ոչ թե ընթացիկ ուսումնական տարվա, այլ ուսուցման մակարդակի նպատակը: Սա նշանակում է, որ կախված երեխայի տարիքից, գրանցվում է, թե տարրական, միջին կամ ավագ դպրոցի ավարտին ինչ հիմնական ձեռքբերումներ պետք է ապահովի աշակերտի կրթությունը:

Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կրթության եռաստիճան համակարգի նպատակները.

1. Տարրական դպրոցում՝ սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է: Տարրական դպրոցն ապահովում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ և միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող մակարդակ:
2. Միջին դպրոցում՝ մարդու, բնության և հասարակության մասին գիտելիքների, դրանք կյանքում կիրառելու կարողությունների և հմտությունների, բարոյական և հոգևոր արժեքների յուրացման այնպիսի մակարդակի ապահովումն է, որն անհրաժեշտ է սովորողին ավագ դպրոցում կամ մասնագիտական հաստատությունում ուսումը շարունակելու, ինչպես նաև տարիքին համապատասխան աշխատանքային գործունեություն իրականացնելու համար:

3. Ավագ դպրոցում՝ սովորողի մասնագիտական կրթություն ստանալու, ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ապահովումն է:

ԱՈՒՊ-ում սովորողի կրթության երկարաժամկետ նպատակների սահմանումը պետք է իրականացվի հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջների պարզեցման և հարմարեցման հիման վրա՝ հաշվի առնելով սովորողի ոչ միայն ուժեղ, այլև նաև թույլ կողմերն ու անհատական նախասիրությունները: Ընդ որում, այդ նպատակների քանակն ու բովանդակությունը կարող են էականորեն տարբերվել հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն և առարկայական ծրագրերի բովանդակային պահանջներից, քանի որ դրանք հարմարեցված են կոնկրետ սովորողի կարողությունների առավելագույն ներուժին:

Եզրակացություն

Ուսումնասիրելով անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը թեման եկանք այն եզրակացության, որ Առուպ-ը որպես ԿԱՊԿՈՒ աշակերտի կրթության կազմակերպման հիմնական փաստաթղթերից մեկը մեծամասամբ համապատասխանում իրեն ներկայացված պահանջներին որպես կարևոր տեղեկատվական աղբյուր ներառական կրթության կազմակերպման բոլոր կողմերի մասին: Առուպը հնարհավորություն է տալիս ինչպես կազմակերպել երեխայի կարիքին համապատասխան կրթություն այլ նաև վերահսկել և գնահատել կատարված աշխատանքը ինչը հնարհավորություն է տալիս ապահովել երեխայի որակյալ կրթություն ստանալու իրավունքը:

Շատ կարևոր է նաև հաշվի առնել Առուպ-ի լրացման ընթացքում երեխայի նախասիրությունները ուժեղ և թույլ կողմերը և հիմնվելով երեխայի ուժեղ կողմերի վրա կազմակերպել հոգեբանամանկավարժական աշխատանքները թույլ կողմերը զարգացնելու նպատակով ինչը կապահովի կատարված աշխատանքի արդյունավետությունը :

Այսպիսով Առուպ-ի կարևորությունը ներառական կրթության գործում շատ մեծ է, քանի որ այն ապահովում ընդհանուր աշխատանքի արդյունավետությունը և նպատակաուղղվածությունը, աշակերտակենտրոն կրթության ապահովումը երեխայի կարիքին համապատասխան: այն նաև հեշտացնում կատարված աշխատանքի վերահսկումը և այն նպատակների առանձնացումը որոնք չեն հաջողվել իրականացնել ուսումնական տարվա ընթացքում քանի որ ԱՈՒՊ-ը առաջին հերթին նախատեսված է ճիշտ և նպատակաուղղված աշխատանքի կազմակերպմանը:

Որպես առաջարկություն կարող ենք նշել ծնողների առավելագույն ներգրավածության ապահովումը՝ ինչպես Առուպ-ի լրացման, այնպես էլ դրա իրականացման գործընթացին,որը կապահովի իրական հետադարձ կապ և, որպես արդյունք պարզ կլինի որքանով է կազմակերված կրթական գործընթացը նպատակաուղղված և արդյունավետ եղել: Ինչպես նաև պարզ կլինի ծնողի սպասումները կրթական գործընթացից և թե որքանով են դրանք իրատեսական :

Գրականության ցանկ

1. Թադևոսյան Ս. Ներառական կրթության հաջողությունները և նոր մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում: Զեկույց: 11 էջ:
2. Միքայելյան Օ. ՀՀ հանրակրթությունում ներառված սովորողի ձեռքբերումների գնահատման շուրջ: «Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր: Եր., ԵՊՄՀ, 2014: 48-54 էջ:

3.Ներառական կրթությունը Հայաստանում: (Հոդվածների ժողովածու): «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ, Եր., 2003: 98 էջ:

4.Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների բազմամասնագիտական թիմի վերապատրաստման դասընթացների բովանդակային նյութերի փաթեթ: Եր., 2010: 18 ժամ,102 էջ:

Հավելված

Ձև 5

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ՝ ԱՈՒՊ

(ՏԻՊԱՅԻՆ ՁԵՎ)

Հաստատված `----------

կողմից:

Տնօրեն՝ _____

Հաստատման ամիս, ամսաթիվ,

տարի _____

1. ՍՈՎՈՐՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Ազգանուն, անուն, հայրանուն_____
2. Ծննդյան վայր_____
3. Ծննդյան օր, ամիս, տարեթիվ_____
4. Սեռը՝ □ իգական □ արական
5. Քաղաքացիությունը_____
6. Բնակության հասցեն _____
7. Ուսումնական հաստատությունը_____
8. Դասարանը (նշել ուսումնական տարին) _____
9. Ծնողների (օրինական ներկայացուցիչների) անուններն ու հեռախոսահամարները_____

10. Արտակարգ իրավիճակների դեպքում՝ կապի միջոց՝ աշխատանքային և բնակարանի հեռախոսահամարներ: _____
2. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2.1 Բնագավառներ, որտեղ դրսևորվում են սովորողի ուժեղ կողմերը՝ Ըստ ուսուցչի Ըստ մանկավարժահոգեբանական աջակցության թիմի Ըստ ծնողի Ըստ սովորողի
2.2 Բնագավառներ, որտեղ դրսևորվում են սովորողի թույլ կողմերը՝ Ըստ ուսուցչի Ըստ մանկավարժահոգեբանական աջակցության թիմի Ըստ ծնողի Ըստ սովորողի
2.3 Ֆունկցիաների կատարողականության մակարդակները՝ ըստ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման. ¬ ձայնի և խոսքի ¬ լսողական ¬ տեսողական ¬ ինտելեկտուալ/մտավոր ¬ շարժողական
2.4 Առողջական վիճակի մասին տեղեկություն
2.5 Հաշմանդամություն

□ ունի □ չունի
2.5 Սովորողի նախասիրությունները
2.6 Ինչպիսի՞ն է իրեն պատկերացնում սովորողը (նշել այն դպրոցը, որտեղ այս պահին սովորում է աշակերտը) Ինչպիսի՞ն է իր երեխային պատկերացնում ծնողը (նշել այն դպրոցը, որտեղ այս պահին սովորում է աշակերտը)

3. ԵՐԵԽԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ		
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ	ԵՐԲ Է ԻՐԱԿԱ-ՆԱՑՎԵԼ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՄՓՈՓ
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում		
Կրթական առաջընթացի գնահատում (գիտելիք, կարողություններ և հմտություններ)		

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ (ՆՇԵԼ ԱՅՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՏՎՅԱԼ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՒՄ Է ՍՈՎՈՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ)

- մայրենի.
- հայոց լեզու
- գրականություն (ավագ դպրոցում՝ հայ գրականություն)
- օտար լեզու.
- ռուսաց լեզու
- մաթեմատիկա.
- հանրահաշիվ
- երկրաչափություն
- ինֆորմատիկա
- բնություն, բնական գիտություններ (ես և շրջակա աշխարհը, բնագիտություն, աշխարհագրություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն)
- հասարակություն, հասարակական գիտություններ (հայրենագիտություն, հայոց պատմություն, Հայոց եկեղեցու պատմություն, համաշխարհային պատմություն, հասարակագիտություն, Հայաստանի աշխարհագրություն) արվեստ (ազգային երգ ու պար, երաժշտություն, կերպարվեստ)

- տեխնոլոգիա.
- ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն (ֆիզկուլտուրա, ՆԶՊ):

5. ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ, ՈՒՐ ԴՐՍԵՎՈՐՎՈՒՄ ԵՆ ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Ուժեղ կողմերը	Արտահայտված կարիքներ

6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱՌԻՊ

7. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

Ուսումնական գործընթացի հարմարեցումներ	Միջավայրային հարմարեցումներ	Առաջընթացի գնահատման գործընթացի հարմարեցումներ

7.1 Աջակցող ծառայությունների տրամադրում (համաձայն աղյուսակի)

Հատուկ մանկավարժական ծառայություն	*Ժամանակա հատված*	*Տևողություն*	*Ծավալներ*	*Ծառայություն ների տրամադրման գրաֆիկ*
• Լոգոպեդի				
• Տիֆլոմանկավարժի				
• Սուրդոմանկավարժի				
• Օլիգոֆրենոմանկա վարժի				
Հոգեբանական ծառայություն	*Ժամանակա հատված*	*Տևողություն*	*Ծավալներ*	*Ծառայություն ների տրամադրման գրաֆիկ*
• հոգեբանի				
Սոցիալզացիա	*Ժամանակա հատված*	*Տևողություն*	*Ծավալներ*	*Ծառայություն ների տրամադրման գրաֆիկ*

• Սոցիալական մանկավարժի				

8. ԱՌԻՊ-Ի ՄՇԱԿՄԱՆ և ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԱՅԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՑԱՆԿ
9. ՍՈՎՈՐՈՂԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
10. ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
11. ՍՈՎՈՐՈՂԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ
ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
11.1 ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՄԱԿԱՐԴԱԿ (ինչքան գիտի և ինչքան է կարողանում)

Գիտելիքներ	Հմտություններ
11.2 ԱՌԱՐԿԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿ	
11.3 ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ	
Գիտելիքներ	Հմտություններ
1-ին կիսամյակ	Գնահատման մեթոդներ
2-րդ կիսամյակ	Գնահատման մեթոդներ

12. ԽՆԴԻՐՆԵՐ՝ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄՆԵՐ
12.1 ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԸՍՏ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԻ

ԹԵՄԱ	ԺԱՄ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԹԵՄԱՅԻ ԱՎԱՐՏԻՆ. ԳԻՏԻ, ԿԱՐՈՂ Է	ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՄԱՆ	ՄԵԹՈԴ

			ԱՄՍԱԹԻՎ	

12.2 ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ	
Ուսումնական գործընթացի հարմարեցումներ	Միջավայրային հարմարեցումներ
ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉ (անուն, ազգանուն, ստորագրություն) _____	ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆ (անուն, ազգանուն, ստորագրություն) _____

13. ԱՈՒՊ-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ (ԸՆԹԱՑԻԿ, ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ, ՏԱՐԵԿԱՆ)	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԺԱՄԿԵՏ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ

14. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՊԼԱՆՆԵՐ (ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ԿԱՄ ՏԱՐՐԱԿԱՆԻՑ՝ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ ԵՎ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻՑ՝ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ)	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԾՆՈՂԻ ՀԱՎԱՍՏԻԱՑԸ

Ես՝ ----------ս, սույնով հավաստիացնում եմ, որ մասնակցել եմ երեխայիս՝ ----------ԱՈՒՊ-ի մշակման գործընթացին և գիտակցում եմ, որ սույն ԱՈՒՊ-ի երկարաժամկետ նպատակները, տարեկան նպատակներն ու խնդիրները և դրանց իրականացման գործընթացը հարմարեցվել և պարզեցվել են երեխայիս կարողությունների և հմտությունների առավելագույն ներուժին համապատասխան, և որ իմ երեխայի կրթության արդյունքներն ու ձեռքբերումները գնահատվելու են ըստ իր ԱՈՒՊ-ով սահմանված նպատակների և

խնդիրների:

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն, ամսաթիվ)

Դպրոցի

ղեկավար//տնօրեն _____ Ամսաթիվ

ԱՈԻՊ-ը մշակող խումբ՝

Ազգանուն, անուն	Պաշտոն	Ստորագրություն
1. _____	_____	_____
2. _____	_____	_____
3. _____	_____	_____
4. _____	_____	_____
5. _____	_____	_____

Ամսաթիվ _____